

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՆՈՒԹ.

(Նորին Կրօնական Կոնգրեսի Կարգադրութիւն)

Ինչպէս Հելլադայի և Պարսկաստանի, նոյն և Հայաստանի մէջ աստուածներու զխառնները երրորդութիւն էին կազմում. այն է՝ Անահիտի, Դիասպասի և Փառ. Թէպէտ ոչ այնքան հաւատածք, սակայն երևում է որ Դիասպասի պաշտօնը նոյնն էր գրեթէ ինչ որ Հելլենաց Արէսի (Մարս), և մի և նոյն ժամանակ քանի մի յատկութիւններով ևս Ապոլլոնին էր համապատասխանում: Դիասպաս խօսքը Հայոց ձենն է, Պարսից Զեւայիշ բառի, (Հերոդոտին մէջ VII, 11 Տէրսպիս) Աքեմենիսի որդւոյ և թերևս Յունաց Դեոնի անուան: Այն տեղը, ուր Անահիտը Դիասպասի ամուսին կանուանուի, ստուգութիւնով կարգաւ չկարողացայ, այս հանգամանքով նա Հելլենաց կուսական Արտեմիսէն շատ կզանազանուի:

Հայոց երրորդ մեծ աստուածը Փառն է. անուան նշանակութիւնը «փառ», «պայծառ», է և Պարսից ու Հայոց սեպհական անուանց արմատ. զոր. Փառնակէս, Փառնարաս, Փառասման (Բարսման), Փառներսէ՛, Ռիսաիհնէնէս, Որոփեռնէս և յն: Այս իրողութիւնը ապացոյց կարէ համարուիլ վերոյիշեալ աստուծոյ ունեցած այն մեծ ազդեցութեան, զոր նա գործ էր դնում այդ երկրի ժողովրդոց միջնարութեան համար: Այդ մասին մեր արձանագրութիւնքը լուսմէն և երբեք նա առանձին չի անուանում, հապա միշտ Անահիտի և Դիասպասի հետ միասին, և ոչ իսկ զոհրնկալ աստուածոց ցուցակի մէջ: Հաւանական որ այդ աստուածը Պարսից Միհր և Յունաց Հելիոս աստուածոյն էր համապատասխանում:

Բացի այս երեք աստուածապետները, 47 ուրիշ աստուածներ ևս անուանուում են. բայց որովհետեւ Հայոց լեզուն սեւը չի որոշում, իսկ մեք ուրիշ նշաններ չունինք, ուստի անկարող եմ բոլորովին բացատրել թէ այս անուններէն ո՞րք արական և ո՞րն իգական աստուածոց կպատկանին: Միայն Անահիտ և Դիասպաս աստուածոյ վերաբերութեամբ տարակոյս չկայ: Բայց և ընդհանրա-

ռակն համարեա բոլոր անունները Հայոց և Պարսից հին պատմագրքերում պահպանուած յատուկ անուանց մէջ դարձեալ կարելի է ճանաչել. ուրեմն ենթադրել կարելի է, որ այս զանազան աստուածներու պաշտօնը շարունակուում էր մինչև քրիստոնէութեան հաստատութիւնը: Թէպէտ երկու կամ երեք անուն թերի են մնացեր կրկնակի օրինակներու մէջ՝ սակայն այս անուանք ստորագաս աստուածոց են պատկանում: Հատ աստուածներ ևս կան, որոնք ոչ թե յատուկ՝ այլ այն քաղաքի կամ զաւառի անուամբ են յիշուում, ուր զիրենք կպաշտէին. զոր. աստուած Տուսպայի, աստուած Արդունայի և շն: Այնժամեան Հայոց համար շատ հասկանալի կարող էր լինել այս, ինչպէս որ մեք Սամոսի, Եփեսոսի, Աթենքի աստուածներու վերայ կը խօսեմք, ուր ամեն մէկը Հելայի, Արտեմիսի և Պալլաս — Բիսնասի վերայ կը մտածէ: Բայց ցաւալի է, որ այնժամեան Հայոց գրականութիւնը, եթէ այսպիսի մի բան եղած կայ, կորսուած է մեզ համար, ուստի մընում է մեզ բաւականանալ արձանագրութեանց սուղ տեղեկութիւններով: Իւրաքանչիւր աստուծոյ մատուցուած զոհերու որքանութիւնը, կարծես թէ նոցա համար մի հաստատ սահման է աւագակարգը, և որովհետեւ ուրիշ վկայութիւնք պակասում են, ես կը ցանկամ նոցա ցուցակը այսպէս շարել:

Եռանձնեայ աստուածներին՝ այսինքն Անահիտի, Դիասպասի և Փառի համար 6 ուղտ:

Անահիտի (առանց մականուան) համար 17 եղ և 34 ուխտար:

Դիասպասի, Անահիտի ամուսնոյ համար 6 եղ և 12 ուխտար:

Ազգային աստուածներու համար 4 եղ և 12 ուխտար:

Լուսնի աստուծոյ համար 4 եղ և 8 ուխտար:

Արտուարասայի համար 34 ուխտար և 2 եղ:

(Անունը չի կարդացուում) համար 2 եղ և 14 ուխտար:

Ինուամալի համար 17 ուխտար:

Հետեւեալ իւրաքանչիւր աստուծոյ համար այն է Խուլթուի, Ուա, «Վատի», — Փատի, Զիրի-

փառ: Արսիմիտ Անահիտիս արանց, Դիասագաս արանց, աստուած Լիմի, 2 եղ և 4 ոչխար:

Վերջիշեալ աստուածները, որ աւելի մեծ զոհերով են պաշտուում քան ուրիշները, 12 հատ են թուով փան զի լուսնի աստուածը Անահիտն է: Այս 12ը հետեւեալքն են. 1) Անահիտիս, 2) Դիասագաս, 3) Փառ, 4) Արտուարասայ, 5) ջընջուած անուն, 6 Ինուամաւ, 7) Խուլթուի, 8) Ուա, 9) Վատի, — 300 է. 10 Զիբիփառ, 11) Արգիմիտ, 12) Լիմի աստուած: Ուրեմն հաւանական է որ Հայերն ևս ունէին տեսակ մի ծերակոյտ կամ աւագատուն, որ 12 աստուածներից էր բաղկանում: Այս անուանց շատերը պատմութեան մէջ երևում են. զօր. Արտուարասայ խօսքը յիշեցնում է Արտոգերասայ բերդը, որ մեր թուականի առաջին չորս դարուց ընթացքում շատ յաճախ անուանուած է: Արգիմիտ մեծ նշմանութիւն ունի Դարեհի Արշամես պապի հետ, Խուլթուի, թուի թէ Պարսից Խուտա և Գերմանացուց Գօտտ աստուածն է: Ուա երեւի թէ գաղափարագիր մի է, ուրեմն տառացի չափի կարգացուի, ինչպէս պատահում է Ասորեստանի բեւեռաձև նշանագրոց մէջ, ուր վերջիշեալ անունը Բէլայ նշանակութիւնն ունի, ուրեմն դա ևս Բէլայ հաւասար աստուած մի է և անտարակոյս մեծաստիճան աստուած մի: Լիմա Վանա ծովու մէջ կղզի մի է, որ ներկայումս ևս մի և նոյն անունն է կրում: Այս տեղ է գտնուում Լիմ անապատը ուր ճգնազգեաց վարդապետներ են բռնակուում, որոնք լիակատար առանձնութեան մէջ մենակեաց վանքում կուսակրօն կիանք են վարում: այս կեանքի մասին դեռ սկզբում յիշածս Հ. Ներս. Սարգսեանը իր ճանապարհորդութեան մէջ մեղ մի քանի տեղեկութիւններ հաղորդում է:

Պարգաւ հետեւում են աստուածներ, որոնցմէ իւրաքանչիւրը մէկ եղ և երկու ոչխար զոհով կը պաշտուի: 25 աստուածոց անուններն ևս յիշուած է. Անահիտը ութ զանազան տիտղոսով է յիշուում. զօր. ողորմած Անահիտիս, Անահիտիս մանգաղով, Անահիտիս Անույ տաճարի մէջ. վերջապէս 12 աստուածներ ևս, որոնք այն քաղաքի կամ գաւառի անուամբ են յիշուում, ուր ծաղկում էին իրենց պաշտամունքը: Անուամբ յի-

շուած աստուածոց մի քանիք հետաքրքրական նիւթ կարող էին լինել. բայց տեղը չէ. Իսկ աշխարհագրական անուանք աւելի ևս հետաքրքրական են ամենից համար: Պլինիոսի պատմութեան մէջ V, 20. Հայաստանի Անատիկայ գաւառ կը յիշուի. որոյ անունը անտարակոյս Անահիտի անունից է յառաջ գալի. այս անուամբ քաղաք մի ևս յիշուում է մեր արձանագրութեանց մէջ, մի և նոյնը որ խորենացին գիրք Բ. գլ. ԺԳ. Երիզայ է անուանում, և որ այսօր իսկ շատ նշանաւոր վաճառաշահ և պատերազմական քաղաք է և երբ զընկեան անունն է կրում: Յայտնի է նոյնպէս որ Պումինու քաղաքի աստուած մի եղեր է. այս անունը Պոնտոսի Պումանան. կ'իշեցնէ, որ այժմ Գիօմենէք Թուրքիոյ մօտ է և Պապագովկիոյ Պոմանան, որ այժմ Էլբիստանն է, երկուսն ևս երեւելի են Անահիտիս հին բազմաներով և զօրաւոր քրմերով, որոնք այս բազմեայ կապասաւորեն: Բայց թէ այս քաղաքներից մէկը, կամ այս անուամբ ուրիշ քաղաք մի կ'իշուի այս տեղ, այդ վճռել չեմ վստահանար. այն է միայն իմ կարծիքը թէ շատ քաղաքներ Պոմանա անունն էին կրում. իսկ թէ այս անունը ունի կրօնական որ և իցէ նշանակութիւն յայտնի է, որ այսօր իսկ Պում Պարսկաստանում սուրբ քաղաք է համարուած, ուր 444 իմամներ, Ալի Ռիզայ իմամի Փաթմայ քրոջ մօտ են թաղուած, գուցէ սուրբ Անահիտիսը թողամի մէջ սուրբ փաթմայ և Անահիտիսի քրմերը իմամ են փոխուէր, այսպիսի փոփոխութիւններ շատ յաճախ են պատահած փոքր Ասիոյ մէջ: Բեշտամ անուն կրակապաշտ մի որ իւր աներ, Ումիդդ դ. Պարսից թագաւորին սպանեց (Քրիստոսից յառաջ 591 ին) և յետոյ նորա որդւոյ դէմ ապստամբեցաւ, Հաջրուր քաղաքումն է թաղուած, ուր ցարդ իսկ կայ նորա գերեզմանը, որ իբրեւ Միրզայ Բեշտամ ուղղափառ մահմետականի մի մարմնոյ աւանդակալ՝ փառաւոր ուխտատեղի է դարձեր:

Չարմանալի է, որ այս ցուցակի մէջ լիցնաւոր աստուծոյն, նուիրած զոհաբերութիւն մի ևս յիշուումէ: Բայց ինչո՞ւ չէ. Յայտնի է որ այն տեղեկան Եզդիգները Տէր ընդ մեզ անունով Իսախաչը կ'պաշտեն: Ժողովրդական կարծիքով

շատ հաւանական էր, որ պատերազմի մէջ թըշնամեաց աստուածը՝ կաշառուելով մէկ եղի և երկու ոչխարի զոհարեութիւնից, փորձանքի մէջ է ձգել իւր հաւատացեալները, եթէ փորձանքն ևս մեծ ազդեցութիւն չի ունենայ, վասնորոյ մէկ եղ և երկու ոչխարն էլ մեծ զրկանք չէ՝ ուր որ հարիւրաւոր եղներ և ոչխարներ կը մորթուէին:

Հատ աստուածներ ևս աւելի քիչ զոհերով են յիշուում, այն է կամ կէս եզով և մէկ ոչխարով, կամ միայն կէս եզով, կամ միայն մէկ ոչխարով, Վերջնոց թուի մէջ, որ ի հարկէ ստորագաս կարգին կպատկանին, վեց անուն է յիշուած սոցա մէջն է և Արայ, Հայ պատմիչք վերին աստիճան առասպելական վեպէր են պատմում իրենց Արայ գեղեցիկ լծագաւորի վերայ, որուն Աստորեստանի Համիրամ թագուհին իւր հրաճարակ սիրով հարեալ, առաջարկել է իւր ձեռքը, սիրտը, գահը և երկիրը, բայց Արայ գեղեցիկը բացասել է Համիրամայ բոլոր առաջարկութիւնքը, որ սաստիկ բարկանալով պատերազմ է բացել Հայաստանի դէմ, խտրիւ հրաման հանելով, որ որքան կարելի է ջնջալ զԱրան ձերբակալ իրեն բերել, բայց տարաբաղդաբար կուռի սաստիկ ժամանակում Արան մեռնում է և Համիրամ, որոյ սրտում բորբոքում էր դեռ ևս սիրոյ նախանձը, տիրում է զՀայաստան և Վանայ բերդն է շինել տալի, Վանայ ծովու մօտ փղի գեղեցիկ դուլթեանը հաւանելով, Այս առասպելութեանց հակառակ, Օպպերտի, Մենանի և այլոց թարգմանած Նինուէի տարեգրութիւնքը այսպէս են բացատրում այդ հարցը, թէ Հայաստանը հպատակութիւն ատող և ապստամբ աշխարհ է եղած միշտ: Իսպոյնիս և Մինուաս որ շատ սիրով զոհագործութիւններ են անում Արային մէկ ոչխար զոհ ունին միայն: Մինուասի Արգիստես որդին չէ ընդունում ընաւ Համիրամի գոյութիւնը, այնպէս որ Վանայ բերդի հիմնադիրը զինքն է համարում և բերդի պարսպաց վերայ քանդակագործուած կտորները, որ ցայսօր իսկ անջինջ մնացել են և որոց իմաստը մեզ յայտնի է, իւր և յաջորդաց օրօք ոչ որ չուրացաւ:

Այս արձանագրութիւնք քաղաքակրթութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ են տալի, զոր

օրինակ Հայոց զէնքերի վերաբերութեամբ աւանդութիւն չկայ ընաւին: Եղեկիէի զԼ. ԼԲ. 4, 5, զԼ. ԼԲ. 3—9 հատուածի մէջ աւելի հաստատ տեղեկութիւններ կան. բայց մի քանի տեղ վերաներ են յիշուում: Ասկի և արծաթ երկու անշամ են կրկնուում և այն անօթի ձեռով, վասն զի յայտնի է որ այն ժամանակ կտրած դրամ չըկար: Յիշուում է այնպէս թէ Հայաստանում ուղտ համարեա չկայ, իսկ ձի շատ քիչ, եղ և ոչխար բազմութիւն են. այս բաները բառացի բացատրութիւնքն են այժմեան դրութեան նայելով, Տեսած չեմ ես այն ժամանակեայ պատկերներն և քանդակագործութիւնք, նայելով որ թանկագին տեղեկութիւնք կարէին տալ. բայց չեմ ցանկար տարակուսել սոցա չլինելու մասին. ում է յայտնի թէ Պարսից, Արաբաց, Մոնղալաց Թուրքաց չընչասիրութիւնը, մոլեռանդութիւնը և բարբարոսութիւնը ինչեր չէին կարող անհետացնել 2500 տարուայ ընթացքում: Որչափ անգին արձաններ տեղական կրօնաւորներու կեղծ եռանդեամբ և անպաշտութեամբ անհետ կորած կարող են լինել:

Աւելի հետաքրքրականը լեզուագիտական օգուտն է, 50 արձանագրութեանց նշանագիրք շատ ճոխ են և հարուստ: Թէ ո՞ր է այն մարդը՝ որ Քրիստոսից առաջ 700 թուականում Ասորեստանի նշանագիրը Հայոց լեզուին յարմարեցրեց այդ մեր գործը չէ, միայն այս է խոստովանելին, որ շատ շնորհաձիր անձ մի պիտի լինէր նա, վասն զի բազմաթիւ նշանները համարեա մէկ հինգերորդի դարձուց և Ասորեաց նշանագրերու դժուարիմացութիւնը անհետացուց իսպառ: Եգիպտացիք, Փրինակեցիք և Յոյնք արգարեւ զգալով որ ի մարդն եղած աստուածային հոգին այսպիսի գործոց մէջ փառաւորապէս յայտնում է, վասն որոյ այդ նշանագրերը զտողին աստուածական պատիւ տուին: Հայոց Պաղմոսը, որ Ասորեաց նշանագրերը ի Հայաստան բերեց և Հայկական լեզուի ուղղին յարմարեցրեց, անյայտ է մնացել մինչև այսօր. գուցէ Գուրայ անուան մէջն է պահուած որ յիշուում է Աստուածոց ցուցակում՝ համեմատիւր Հայոց «գրել», «գրութիւն», Յունաց Գրաֆա, Հայոց պատմութիւնը այս անիրաւութիւնը այնու է ծածկում, որ հազար տարուց ետքը Հայոց պոթ-

մեան այրուքները յօրինողի անունը մեծ յարգութեամբ է յիշատակում:

Հայոց բեռնաձև նշանագիրք շատ անշան դաշնադաշնութիւն ունին ուրիշ ազգաց նշանագիրներին. ամենանշանաւոր փութութեանն այն է որ իւրաքանչիւր տող մէկ ամբողջ բառով պիտի վերջանայ, ապա ուրեմն տողի վերջը կիսակտոր բառ հատանելն անպատշաճ է: Այս դրութեան ուրիշ յատկութիւն մի դորա հետ սերտ կապակցութիւն ունի. Այս ինքն եթէ տողը գեռ չլրացած՝ դարձեալ բառ մի պիտի գրուի. և այդ բառն երկար լինելով՝ չի կարող մնացած տեղոյն մէջ պարունակուիլ, այն ժամանակ նախընթաց բառը կամ մի և նոյն տողի ուրիշ մի բառ իւր վանկերու շատ կամ քիչ կրկնութեամբ չերկարացուի մինչև որ տողը լրանայ. զոր օրինակ. Մինուաս անունը կարելի է պարզ գրել չորս նշանով Մի—նու—ա—ս, բայց երկարացնելու դիտաւորութեամբ Մի—ի նու—ա—ս, Մի—նու—ու—ա—ս, Մի—ի նու—ու—ա—ս: Այս ըստ երևութիւն չփոթիչ յատկութիւնները, բնագիրը լուծելու ժամանակ մեծ օգուտներ կ'մատուցանեն. այս միջոցով ահա Հինքսը Հայկական նշանագրոց պարզ վանկերը ծանաւեց, զորանով բառերու բաժանմունքը կը դիւրանայ և քննութեանց արդիւնքը կատուգուի:

Հայոց բեռնաձև արձանագրութեանց լեզուն նախնի Հայոց լեզուի լիակատար օրինակն է ընծայում և այս կողմով ուրեմն շատ հետաքրքիր է. եթէ վաղուց արդէն ծանօթ արձանագրութիւնք իրենց տեղում դարձեալ վերաքննուին և եթէ ինչպէս Հայք հաստատում են իրենց եկեղեցեաց և Վանուց մէջ եղած բազմաթիւ նիւթերը պահպանուած են, խելացի ծանապարհորդաց ձեռամբ օրինակուին, այն ժամանակ, համեմատական լեզուագիտութեան համար հարուստ նիւթ կարող է դառնալ. Արդէն յայտնի նիւթերէն քանի մի փորձեր կարող են հետաքրքիր լինել:

Հայրանունականները իսկ և իսկ այնպէս են կազմուած, ինչպէս արդի Հայոց (և մասամբ Յունաց) մէջ. այսինքն ինչ մասնկան միջնորդութեամբ, զոր օրինակ Արգեստիս Մինուասի որդի ասուում էր Արգեստիս Մինուասի, ուրեմն արդի

Հայոց Պետրոսեան, Յակովբեան և ուրիշներու նրման, ուրեմն յայտնի է որ Հին Հայոց ինչ նոր Հայոց ինչ է փոխուեր:

Այս հնագոյն լեզուի նշխարներուն մէջ հոլով մունքն և խնարհմունքը ձեւերի նոյն աղբատութիւնն են ցուցանում, ինչ որ միջին և նոր Հայոց այն ինչ Հին Պարսից, Հատինաց Գոթաց լեզուները իրենց ձեւերի հարստութիւն աւելի երկար ժամանակ պահպանեցին: Արդեօք այն ժամանակուայ Հին Հայոց լեզուն Քրիստոսից 700 տարի առաջ ծերացեր էր արդէն, կամ թէ ձեւերի հարստութիւն բնաւ չի ունեցեր. ո՞վ կարող է այս խնդիրը լուծել: Բայց արձանագրութեանց լեզուն կրկնակի անցեալ ժամանակ բայի ունի, որ միջին և նոր Հայոց լեզուի մէջ անհետացեր է:

Հետեւեալ քանի օրինակները բառերու գանձարանից են հանուած որոնք հետաքրքրական համեմատութեանց նիւթ կարելին դառնալ:

Արգեստիս, նոր Հայոց Արգեստի, համեմատիր Յունաց Արգեստի, բառի հետ Բարեստ և Արգեստ, երկուսն ևս ձի կրնանակն. Արգեստ բռնաձի է, Յունաց Արգեստ, Լատինաց Արգեստ և Պարսից Արգեստ. Բարեստ պատերազմական երիվար է, Հնդկաց Բարեստ:

Բարեստ, բառը բաղադրուած է Բարեստ, Յունաց Պերրէյուս Գերմանացոց Բարեստ և Բարեստ բառերից:

Հարստ (երեւ թէ հիւս) շինութիւն, համեմատիր Գերմանացոց Հարստ և Հարստ տուն:

Դարստ, Գերմաներէն Դարստ, Յունաց Դարստ:

Դարստ, (երեւ դուն զաշոյն) զօրութիւն կը նշանակէ, Պարսից Դարստ, համեմատիր Յունաց Դարստի, Գերմանացոց Դարստի, Դարստի բառերի հետ:

Բազմիցս կրկնուած նախադասութեան մէջ, ուր գերի տանելու վերայ է խօսուում, Դարստի է յիշուում ևս հետս քշելով բերեցի, և Դարստ արմատէն, նոր Հայոց Դարստ, նման է Գերմանացոց Դարստ բառին որ կնշանակէ մղել, խթնել: